

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
 Ծրագիր՝ Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում
 «ԼԱԲՈՐԱՏՈՐ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՌՈԲՈՏՆԵՐԻ ԳՆՈՒՄ»

ԱՄԳ No՝ ՀԱԱՀ-ԱՄԳ-ԼԱԲ-24/2

Պարզաբանում թիվ 2

No.	Պարզաբանման հարցում	Պարզաբանում
1.	<p>1-ին չափաբաժնի 1-րդ կետով պահանջվող 6 առանցքանի խելացի եռակցման ռոբոտի համար որպես պահանջ նշված է՝ Շարժման միջակայքը. J1 -170°~170°, J2 -140°~90°, J3 -85°~135°, J4 -170°~170°, J5 -120°~130°, J6 -350°~350°, Առավելագույն արագությունը., J1 150° /վրկ, J2 150° /վրկ, J3 150° /վրկ, J4 320° /վրկ, J5 150° /վրկ, J6 320° /վրկ: Ցանկանում ենք տեղեկացնել, որ այժմ այդ ռոբոտներն արտադրվում են առանցքների հետևյալ ազատության աստիճաններով և արագություններով՝ Շարժման միջակայքը. J1 -155°~155°, J2 -90°~65°, J3 -75°~110°, J4 -180°~180°, J5 -115°~115°, J6 -360°~360°, Առավելագույն արագությունը՝ J1 110° /վրկ, J2 146° /վրկ, J3 134° /վրկ, J4 273° /վրկ, J5 300° /վրկ, J6 336° /վրկ: Խնդրում եմ պատասխանել, ընդունելի՞ են նշված տարբերությունները, ինչպես նաև նշել նվազագույն թույլատրելի արժեքներ:</p>	<p>6 առանցքանի խելացի եռակցման ռոբոտի կիրառելիությունը ուսումնական (ոչ արդյունաբերական) է: Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը չպետք է ազդեն սարքի ֆունկցիոնալ գործունեության վրա: Առաջարկվող ապրանքի բնութագրերը էապես չպետք է շեղվեն պահանջվող տեխնիկական բնութագրերից:</p>
2.	<p>1-ին չափաբաժնի 2-րդ կետով պահանջվող ախտահանիչ ռոբոտի համար խնդրում ենք պատասխանել ի՞նչ է նշանակում «ինքնավար վերելակ» պահանջը:</p>	<p>Պահանջը հետևյալն է՝ «ինքնավար խուսափում խոչընդոտներից»</p>
3.	<p>1-ին չափաբաժնի 3-րդ կետով պահանջվող արդյունաբերական ծառայության արհեստական ինտելեկտի հումանոիդ ռոբոտի համար խնդրում ենք ստուգել և անհրաժեշտության դեպքում ճշգրտել հետևյալ բնութագրերը, քանի որ կատարվել են</p>	<p>Հրավերում չկա հղում որևէ արտադրողի ապրանքատեսակին, ուստի առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը (եթե առկա են ոչ էական շեղումներ պահանջվող բնութագրերից) չպետք է ազդի սարքի ֆունկցիոնալ</p>

<p>փոփոխություններ արտադրողների տեխնիկական բնութագրերում: Խնդրում ենք պատասխանել, ընդունելի՞ են արդյոք հետևյալ բնութագրերը՝ <u>մարտկոցի հզորությունը՝ 24Վ /20 Ա/ժամ, զուտ քաշը 54 կգ, աշխատանքային ժամանակը՝ 8 ժամ:</u> Խնդրում ենք նաև պարզաբանել ի՞նչ է նշանակում <u>«Պարելու առանձնահատկությունները»</u> և <u>«Խաղարկային պարային խմբավորում»</u> ցուցանիշները: Կարծում ենք տեղի է ունեցել թարգմանության սխալ:</p>	<p>գործունեության վրա</p>
<p>4. 2-րդ չափաբաժնի 1-ին կետով պահանջվող Պրոֆեսիոնալ հավաքածու 6 առանցքանի ռոբոտային մանիպուլյատորի տեխնիկական բնութագրում ևս կատարվել են փոփոխություններ արտադրողի մոտ: Միննույն ժամանակ Ձեր կողմից կազմված տեխնիկական պահանջները պարունակում են ցուցանիշներ, որոնք կիրառելի չեն լրակազմի տվյալ բաղադրիչի համար.</p> <p>Ձեր կողմից պահանջվում է՝ «Ստանդարտ ծանրաբեռնվածությունը, գ - ոչ պակաս 250 Առավելագույն ծանրաբեռնվածություն (շարժումը աշխատասեղանի մոտ), գ - ոչ պակաս 400»:</p> <p>Իրականում ստանդարտ բեռնվածությունն ունի երկու բաղադրիչ հորիզոնական բեռնվածություն, որը կազմում է մինչև 600 գր և կողային ծանրաբեռնվածություն, որը կազմում է 150 գր:</p> <p>Լրակազմում պահանջվում է «գրիչ X1», սակայն տվյալ տեսակի սարքերի լրակազմում գրիչի համար նախատեսված բռնիչ է ներառված, այլ ոչ գրիչ: Հետևաբար նաև «Գրիչի տիրույթը՝ 7-10 մմ», մեր կարծիքով պետք է ձևակերպվի Գրիչի բռնիչ աշխատանքային տիրույթը՝ 7-10 մմ:</p> <p>Օդաճնշական ներծծող բաժակների համար կա պահանջ «Ճնշումը՝ -60 ԿՊա», սակայն այս պահանջը կիրառելի է ոչ թե բաժակների, այլ՝ ճնշակի համար:</p> <p>Անհասկանալի է, թե պահանջներում ինչու են տեղ գտել առաքման մասին տվյալները: Քանի որ փաթեթավորման</p>	<p>Հրավերում չկա հղում որևէ արտադրողի ապրանքատեսակին: Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը չպետք է ազդեն սարքի ֆունկցիոնալ գործունեության վրա: Առաջարկվող ապրանքի բնութագրերը էապես չպետք է շեղվեն պահանջվող տեխնիկական բնութագրերից:</p>

	չափսերն ու զանգվածը ոչ էական հանգամանքներ են:	
5.	3-րդ չափաբաժնի 2-րդ կետով պահանջվող Դելտա ոռոտի համար խնդրում ենք պարզաբանել ի՞նչ է նշանակում «Պլատֆորմի տարբերակները. Տեղական համակարգիչ (Windows)» պահանջը:	3-րդ չափաբաժնի 2-րդ կետով պահանջվող Դելտա ոռոտի համար «Պլատֆորմի տարբերակները. Տեղական համակարգիչ (Windows)» պահանջը կապված է այն հանգամանքի հետ, որ Դելտա ոռոտի ծրագրակազմը ուսանողներին և հետազոտողներին հնարավորություն է տալիս ավելի հեշտ փոփոխել, ստեղծել և փորձարկել իրենց սեփական այլոթիթմները Windows օպերացիոն համակարգում:
6.	3-րդ չափաբաժնի 3-րդ կետով պահանջվող «Սենյակի գծային գանթի ոռոտի» համար որպես պահանջ նշված է «Աշխատանքային տարածքը՝ DLE-RG-0001 ոչ պակաս 500 x 500 x 150 [մմ], Առավելագույն ծանրաբեռնվածությունը՝ 10 [կգ]»: Սակայն DLE-RG-0001 աշխատանքային տարածքին համապատասխանում են «500 x 500 x 100 [մմ], Առավելագույն ծանրաբեռնվածությունը՝ 10 [կգ]» արժեքները: Խնդրում ենք պատասխանել, ընդունելի՞ է նշված տարբերություններով սարքը:	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը չպետք է ազդեն սարքի ֆունկցիոնալ գործունեության վրա: Առաջարկվող ապրանքի բնութագրերը էապես չպետք է շեղվեն պահանջվող տեխնիկական բնութագրերից:
7.	4-րդ չափաբաժնի 1-ին կետով պահանջվող 3 առանցքանի ֆրեզերային հաստոցի համար ընտրված են տեխնիկական այնպիսի տվյալներ, որոնք կիրառելի չեն ներկայումս արտադրվող հաստոցների համար: Միևնույն ժամանակ խնդրում ենք նշել ի՞նչ նյութի մշակման համար է անհրաժեշտ տվյալ հաստոցը: Ինչպես նաև տեղեկացնում ենք, որ պահանջվող 400 Վտ շարժիչի հզորությամբ հաստոցները կիրառելի են միայն փայտի և նմանատիպ կոշտություն ունեցող նյութերի մշակման համար:	Հրավերում չկա հղում որևէ արտադրողի ապրանքատեսակին: 3 առանցքանի ֆրեզերային հաստոցը անհրաժեշտ է մետաղի մշակման համար:
8.	4-րդ չափաբաժնի 2-րդ կետով պահանջվող գանձիչի համար որպես պահանջ նշված է «Հզորությունը՝ ոչ պակաս քան 0,55 կՎտ» և «Որդնյակային գանձիչի հավաքածուն պետք է պարունակի նաև. Երկանի կոճղակային արգելակի մոդել – 1 հատ, Ժապավենային արգելակի մոդել – 1 հատ, Ժապավենային և բլոկայացնող արգելակ – 1 հատ, Մեխանիկական սկավառակային արգելակի մոդել – 1 հատ»: Մեր կարծիքով տեղի է ունեցել վրիպակ, քանի որ գանձիչը չի	Պահանջվող տեխնիկական բնութագիրը խմբագրվել է հետևյալ կերպ. <i>Ռեդուկտորի փոխանցման թիվը,</i> 40 <i>Դանդաղըթաց լիսեռի</i> <i>Պրոպանի հաճախությունը, պր/րոպ</i> 35 <i>Պրոպող մոմենտը դանդաղըթաց</i> <i>լիսեռի վրա, Ն*մ</i> ոչ պակաս 110 <i>Որդնյակի և որդնանիվի</i>

	կարող ունենալ սեփական հզորություն, իսկ լրակազմը չի կարող ներառել պահանջվող բաղադրիչները: Խնդրում ենք վերանայել ձեր պահանջները և տրամադրել նվազագույն թույլատրելի արժեքներ կամ սահմաններ:	կենտրոնների հեռավորությունը, մմ Մուտքի լիսեռի անցքը կցաշտրթի մեջ: 90
9.	4-րդ չափաբաժնի 3-րդ կետով պահանջվող գաձիչի անվանումը նշված է որպես « Գլանային ատամնանիվներով գանձիչ », սակայն նկարում պատկերվածը մոլորակային տիպի է: « Անվանական մուտքային արագություն 3000 պտ/րոպ, Առավելագույն մուտքային արագություն 6000 պտ/րոպ » պարամետրերի համար խնդրում ենք նշել հնարավոր թույլատրելի շեղման չափեր, եթե կիրառելի են, կամ նշել նվազագույն արժեքներ: Էական նշանակություն ունի արդյո՞ք գանձիչի քաշը « մոտ 10,5 կգ », նշված պարամետրերն ապահովող գանձիչները սովորաբար ծանր են լինում: Ընդունելի՞ են 30 – 70 կգ քաշերով գանձիչները:	Գլանային ատամնանիվներով գանձիչը կիրառվելու է ուսումնական նպատակով, ուստի շեղումները կարող են համարվել ոչ էական և ընդունելի, եթե չեն ազդում սարքի ֆունկցիոնալության վրա:
10.	5-րդ չափաբաժնի 2-րդ կետով պահանջվող սարքավորման անվանումը նշված է որպես « Էլեկտրոնիկայի համակարգի սարքավորումների՝ շարժիչի և տրանսֆորմատորի կառուցվածքի և նորոգման ուսուցման լաբ »: Տեխնիկական բնութագրերը ևս համընկնում են անվանմանը, սակայն նկարում ներկայացված է այլ սարքավորում (Էլեկտրոնային տեխնոլոգիաների ուսուցման լաբորատոր ստենդ): Խնդրում ենք հստակեցնել, ո՞ր սարքավորումն է իրականում պահանջվում:	«Էլեկտրոնիկայի համակարգի սարքավորումների՝ շարժիչի և տրանսֆորմատորի կառուցվածքի և նորոգման ուսուցման լաբ»-ի նկարագրում կցված նկարը այլ է՝ տեխնիկական վրիպակ է: Պահանջվող սարքավորման նկարն է՝ 
11.	6-րդ չափաբաժնի 1-ին կետով պահանջվող Ինքնավար լիցքավորման կարգավորիչի համար ներկայացված տեխնիկական պահանջներում նշված արժեքներով կարգավորիչներ ներկայումս չեն արտադրվում: Խնդրում ենք	Խնդրում ենք առաջնորդվել հրավերում սահմանված պահանջներով: Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը չպետք է ազդեն սարքի ֆունկցիոնալ գործունեության վրա: Առաջարկվող ապրանքի բնութագիրը

	նշել ձեր նվազագույն պահանջները, կամ առաջնորդվել արտադրողների արդիական ցուցանիշներով:	էապես չպետք է շեղվեն պահանջվող տեխնիկական բնութագրերից:
12.	6-րդ չափաբաժնի 1-ին կետով պահանջվող Հողմատուրբինի ցանցի վերահսկիչի համար խնդրում ենք պարզաբանել՝ ի՞նչ է նշանակում «Աղբի կամ բեռնվածքի չափը (մմ)» ցուցանիշը: Կարծում ենք տեղի է ունեցել թարգմանության սխալ:	Անհրաժեշտ է ներկայացնել Սարքի չափը (մմ)
13.	6-րդ չափաբաժնի 2-րդ կետով պահանջվող ինվերտորի համար խնդրում ենք ստուգել մարտկոցի պահանջվող բնութագրերը: 1 կՎ և ավելի ինվերտորների դեպքում մարտկոցի նոմինալ լարումը սովորաբար 48 VDC է պահանջվող 12/24 VDC – ի փոխարեն: « Հաճախականությունը, Հց 45-65 » պահանջը կիրառվի է ոչ թե մարտկոցի, այլ բուն ինվերտորի մուտքի համար: Էական է արդյո՞ք « Չափսերը ոչ ավել, մմ 305x200x190 » պահանջը: Սովորաբար 1 կՎ ինվերտորների չափսերն ավելին են, քան ձեր կողմից պահանջվածները:	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը չպետք է ազդեն սարքի ֆունկցիոնալ գործունեության վրա: Առաջարկվող ապրանքի բնութագիրը էապես չպետք է շեղվեն պահանջվող տեխնիկական բնութագրերից:
14.	6-րդ չափաբաժնի առաջին և երկրորդ կետերում ներկայացված են երկուական սարքավորում: Համաձայն մրցույթի հրավերի 7-րդ բաժնի «Ապրանքների ցանկ և մատակարարման ժամանակացույց»-ի ամեն կետից պահանջվում է 2 ական: Խնդրում ենք հստակեցնել, 1-ին և 2-րդ կետերում ներառված յուրաքանչյուր սարքավորումից պահանջվում է մեկական, թե՛ երկուական հատ:	6-րդ չափաբաժնի առաջին և երկրորդ կետերում ներկայացված սարքավորումների պահանջվող քանակը՝ 2 հավաքածու, որոնցից յուրաքանչյուրում ներառված է երկու ապրանք:
15.	6-րդ չափաբաժնի դեպքում, ելնելով ձեր կողմից պահանջվող սարքավորումների տեսակներից, կարելի է ենթադրել, որ պահանջվում է 2 համակարգ՝ ցանցային և ոչ ցանցային, որոնցից յուրաքանչյուրի լրակազմում անհրաժեշտ էր նախատեսել 48 Վ և 220 Վ մեկական սկավառակային տիպի մագնիսային գեներատոր: Ձեր կողմից պահանջվում է ընդհամենը մեկ հատ 48 Վ: Խնդրում ենք ստուգել այս հանգամանքը և պատասխանել, արդյո՞ք պահանջներում չկան բացթողումներ:	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը չպետք է ազդեն սարքի ֆունկցիոնալ գործունեության վրա: Առաջարկվող ապրանքի բնութագիրը էապես չպետք է շեղվեն պահանջվող տեխնիկական բնութագրերից:
16.	7-րդ չափաբաժնի առաջին կետով պահանջվող «Գործառնական ուժեղացուցիչների կիրառական լաբ.» անվամբ և տեխնիկական պահանջներով սարքավորումներ շուկայում առկա չեն: Կարծում	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը չպետք է ազդեն սարքի ֆունկցիոնալ գործունեության վրա: Առաջարկվող ապրանքի բնութագիրը էապես չպետք է շեղվեն

	ենք սխալմամբ գրվել են այլ սարքին բնորոշող տեխնիկական տվյալներ: Խնդրում ենք ստուգել և անհրաժեշտության դեպքում կատարել փոփոխություններ:	պահանջվող տեխնիկական բնութագրերից:
17.	9-րդ չափաբաժնի առաջին կետով պահանջվող սարքավորման համար խնդրում ենք նշել թույլատրելի շեղման սահմաններ, քանի որ արտադրողների մոտ պարբերաբար կատարվում են փոփոխություններ:	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը չպետք է ազդեն սարքի ֆունկցիոնալ գործունեության վրա: Առաջարկվող ապրանքի բնութագրերը էապես չպետք է շեղվեն պահանջվող տեխնիկական բնութագրերից:

Ծանոթություն.

Մրցույթային հրավերի շրջանակներում ստացված հայտերը դիտարկում և գնահատում է այդ նպատակով ստեղծված հանձնաժողովը՝ համաձայն «Համաշխարհային Բանկի գնումների կանոնակարգեր ՆԾՖ փոխառուների համար/ «World Bank Procurement Regulations for IPF Borrowers» [հուլիս 2016թ., վերանայված նոյեմբեր 2017 և օգոստոս 2018, նոյեմբեր 2020] : Առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը մրցույթային փաստաթղթերին, ինչպես նաև սահմանված տեխնիկական բնութագրերից շեղումների «էական/ ոչ էական» դասակարգումը, ապրանքների տեխնիկական բնութագրերի «ընդունելի/ոչ ընդունելի» համարվելը, իրականացվում է գնահատման ընթացում՝ գնահատող հանձնաժողովի կողմից: